ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N17-18-1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

10 օգոստոսի 2017թ. քաղաք Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝ Ա. Լոպոյան
Ռ. Դալլաքյան
Հ. Իգիթյան
Հ.Բաբայան
Հրավիրված Ա. Միլոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 04/08/17թ. «Շիրակ»-«Ալաշկերտ» (ԲԽ001) խաղի նախախաղային խորհրդակցությանը «Ալաշկերտ» թիմի ներկայացուցչի չմասնակցելու մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

2. ՄԿԱ բաժանմունքի պետ Ա.Լոպոյանի 09/08/2017թ. զեկուցագրի քննարկումը /զեկուցող Ա. Լոպոյան/

3. ՀՖՖ Լրատվական բաժնի մասնագետ Ա.Միլոյանի 09/08/17թ. զեկուցագրի քննարկումը /զեկուցող Ա. Միլոյան/

4. «Շիրակ» ֆուտբոլային ակումբի գրանցումից հանելու դիմումը 15 օրվա ընթացքում ՀՖՖ չներկայացնելու մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

5. 23/07/2017թ. «ՖԿ Արցախ»-«Արարատ» (ԸԽ011) խաղին մրցակիցների իրար հարվածելու մասին /զեկուցող Ա. Լոպոյան/

1. 04/08/17թ. «Շիրակ»-«Ալաշկերտ» (ԲԽ001) խաղի նախախաղային խորհրդակցությանը թիմի ներկայացուցչի չմասնակցելու) մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

04/08/17թ. «Շիրակ»-«Ալաշկերտ» (ԲԽ001) խաղի նախախաղային խորհրդակցությանը «Ալաշկերտ» թիմի ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 19-րդ կետի համաձայն՝ «Ալաշկերտ» ֆուտբոլային ակումբին տուգանել 30000 դրամ:

2. Մրցումների կազմակերպման և անցկացման բաժանմունքի պետ Ա. Լոպոյանի 10/08/2017թ. զեկուցագրի քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

2.1 «Շիրակ» և «Շիրակ-2» թիմերի հայտերը ուշ ներկայացնելու (6 և 6 օր) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 60000 դրամ:

2.2 «Գանձասար-Կապան-2» թիմի հայտը ուշ ներկայացնելու (9 օր) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-Կապան» ֆուտբոլային ակումբին տուգանել 45000 դրամ:

2.3 «Լոռի.» թիմի հայտը ուշ ներկայացնելու (6 օր) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ Վանաձորի ֆուտբոլի ակադեմիային տուգանել 30000 դրամ:

3. ՀՖՖ Լրատվական բաժնի մասնագետ Ա.Միլոյանի 09/08/17թ. զեկուցագրի քննարկումը

ՈՐՈՇԵՑԻՆ՝

04/08/17թ. «Շիրակ»-«Ալաշկերտ» (ԲԽ001) խաղի տեսագրությունը չներկայացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

4. «Շիրակ» ֆուտբոլային ակումբի գրանցումից հանելու դիմումը 15 օրվա ընթացքում ՀՖՖ չներկայացնելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Շիրակ» ֆուտբոլային ակումբի գրանցումից հանելու դիմումը 15 օրվա ընթացքում ՀՖՖ չներկայացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 26-րդ կետի համաձայն՝ «Շիրակ» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

5. 23/07/2017թ. «ՖԿ Արցախ»-«Արարատ» (ԸԽ011) խաղին մրցակիցների իրար հարվածելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

23/07/2017թ. «ՖԿ Արցախ»-«Արարատ» (ԸԽ011) խաղին մրցակիցների իրար հարվածելու համար՝

5.1 «ՖԿ Արցախ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

5.2 «Արարատ» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ